ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ *ԵԴ2/0918/02/24*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահությամբ դատավոր ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆԻ

2024 թվականի փետրվարի 13-ին քաղաք Երևան

քննարկելով «Լենտեքս» ՍՊ ընկերության ներկայացուցիչներ Հայկ Հարությունյանի և Ռիմա Կոշտոյանի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Լենտեքս» ՍՊ ընկերության ներկայացուցիչներ Հայկ Հարությունյանի և Ռիմա Կոշտոյանի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմին, Դատական դեպարտամենտի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 12.07.2023 թվականի թիվ ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19-4 պետական կարիքների համար ապարանքների մատակարարման պայմանագիրը միակողմանի լուծման հիմքն անվավեր ճանաչելու, և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) գրասենյակ է մուտքագրվել 01.02.2024 թվականին, իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 06.02.2024 թվականին:

Դատավորի աշխատակազմը հաղորդակցության միջոցով 09.02.2023 թվականին տեղեկացրել է հայցվորի ներկայացուցիչ Ռիմա Կոշտոյանին հայցադիմումում առկա թերության, մասնավորապես՝ հայցադիմումում հայցվորի պատասխանողի և ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի էլեկտրոնային փոստի հասցեի բացակայության մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել այն:

ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ ԴԱՏԱՎՈՐ

13.02.2024 թվականին հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետով սահմանված կարգով վերացրել է նույն հոդվածի 1.1-ին մասում նշված հայցադիմումում առկա ձևական թերությունը (հիմք՝ հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված թիվ Մ-1059/24 դիմումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ «Լենտեքս» ՍՊ ընկերության ներկայացուցիչներ Հայկ Հարությունյանի և Ռիմա Կոշտոյանի կողմից ներկայացված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմին, Դատական դեպարտամենտը կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, ուշացումը այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարավորությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի սահմանումը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ԱՌԱՋԻՆ ԱՏԵՍԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐ ՄՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27.2 գլխով նախատեսված հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Լենտեքս» ՍՊ ընկերության ներկայացուցիչներ Հայկ Հարությունյանի և Ռիմա Կոշտոյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմին, Դատական դեպարտամենտից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ, Դատական դեպարտամենտն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**